ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 21 հուլիսի 2017Ã.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբª Հ. Նազարյանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով Գագիկ Բաղալյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Գագիկ Բաղալյանը 11.07.2017թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 6-րդ, 60-րդ, 61-րդ, 63-րդ, 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը, և/կամ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված բովանդակությամբ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 6-րդ, 60-րդ, 61-րդ, 63-րդ, 79-րդ հոդվածներին հակասող և

անվավեր, և/կամ բացահայտել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը»:

Ըստ դիմողի՝ առաջին ատյանի դատարանի եւ վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման, ինչպես նաեւ Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու արդյունքում խախտվել են իր դատական պաշտպանության եւ սեփականության սահմանադրական իրավունքները:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթի 2-րդ մասի 1-ին նախադասությամբ օրենսդիրը նպատակ է հետապնդել ապահովելու եւ լրացնելու պետական տուրքի չբավականացնող գումարն այն պարագայում, երբ գործի քննությունն իրականացվել է մինչեւ վերջ, որի հետեւանքով դատարանը ռեսուրսներ է ծախսել ավելացված հայցագին ունեցող գործի դատաքննության ընթացքում, սակայն գործող օրենսդրությամբ չի կարգավորվում հայցից հրաժարվելու կամ դատավարության ընթացքում հայցապա-հանջի ավելացման, այնուհետեւ՝ դրա պակասեցման հնարավոր իրավիճակներում հայցագնի սահմանման կարգը:

Դիմողի կարծիքով՝ օրենսդրությամբ նախատեսված չէ այն դեպքը, թե ինչպես պետք է վարվի դատարանը պետական տուրքի չափը որոշելիս՝ ավելացված հայցագինը նվազեցնելու դեպքում, երբ պետական տուրքը վճարված չէ ավելացված հայցագնին համապատասխան:

Դիմողը գտնում է, որ խնդրո առարկա գործի շրջանակներում կիրառված՝ Դատարանների նախագահների խորհրդի 2013թ. հունվարի 29-ի թիվ 129 որոշման 19-րդ կետի երկրորդ նախադասության բովանդակությունը դուրս է վիճարկվող դրույթի բովանդակության սահմաններից, մասնավորապես, օրենսդիրը սահմանել է «վճարվածը ենթակա չէ վերադարձման», այլ ոչ թե՝ «չվճարածը ենթակա է վճարման» կանոնը, մինչդեռ Դատարանների նախագահների խորհուրդը «վճարվածը ենթակա չէ վերադարձման» կանոնը մեկնաբանել է «չվճարածը ենթակա է վճարման» իմաստով՝ ստեղծելով նոր կարգավորում, որը խախտում է իրավական որոշակիության սկզբունքը:

Դիմողը, վկայակոչելով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017թ. թիվ ՎԴ/6047/05/15 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներն առ այն, որ «… անձի դատական պաշտպանությունը չի կարող արդյունավետ լինել, երբ վերջինս վերջնական բարենպաստ դատական ակտին հասնելու համար կրում է ավելի շատ ծախսեր, քան այն գույքի հնարավոր կորուստն էր, որի կանխման համար նա դիմել էր դատական պաշտպանության…», գտնում է, որ դատական պաշտպանության դիմելով՝ ինքը հայտնվել է առավել անբարենպաստ վիճակում, քան մինչ այդ էր:

2. Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ առկա չեն Գագիկ Բաղալյանի դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 և 69-րդ հոդվածներով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Գագիկ Բաղալյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրու-

թյանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

21 հուլիսի 2017 Ãí ³ Ï ³ ÝÇ
ê ¸ ¸ Î à/2-17